

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉԸ

PhbSa



1579

ՅԵՐԵՎԱՆ 1930 ՊԵՏՐԱՏ




Կ. ԼՈՐԴԿԻՊԱՆԻՁԵ

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉԸ

Թարգմ. Ա. ԱՌԻՇՏՐՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1929



Հրատ. № 1117

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառեպ. № 2808(բ) Տիրաժ 2500 Պատվ. 1165

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉԸ

1

Յեւ վառում եմ մոմը: Ծածկում պատու-
հանի փեղկերը և նստում գրասեղանիս մոտ:
Ընկերս, վոր ինձ մոտ և ապրում, ա-
սում ե.

— Այս գիշեր թատրոնում շատ լավ ներ-
կայացում ե, խորհուրդ եմ տալիս գնաս:

Նրա յերեսին խաղում ե ժպիտը: Նա գի-
տե, վոր այս գիշեր պիտի լուսացնեմ. լու-
սադեմին, լուսադեմի պես գունատ՝ կզար-
թեցնեմ նրան և կկարգամ այս իմ պատ-
մը վաճառ:

Նա գիտե այս, հարգում և ինձ և կար-
ծես խղճում:

Նա գնաց:

Ամեն մի գրող գրելու ժամանակ յուրա-
հատուկ սովորություն ունի. որինակ յես,
չեմ կարող գրել այն սենյակում, վորի ի-
րերին և պատին կախված նկարներին սովոր
կամ ընտելացած չեմ. չիրը ընկնում եմ ո-

տար սենյակ, զննում եմ այգալիսի իրերը: Դրանք շարժում են իմ հետաքրքրությունը: Ժամանակն անցնում է. հոգնում եմ:

Յես իմ սենյակում ամեն ինչ մանրազնիւն գիտեմ, յես իշխում եմ բոլորի վրա: Այ՛, իս այս բոպհիս գլխակոր գրում եմ, հանկարծ բարձրացնում եմ գլուխս, ուղում եմ հիշել այս պատմվածքիս հերոսի աչքերըն այն պահին, չեբբ դրան կթողնի իր սիրած աղջիկը:

Աչքերս հառում եմ դիմացս կախված նկարին, զգում եմ, վոր այս նկարը նայում է այնպես, ինչպես իմ հերոսի աչքերը: Այս ուրախացնում է ինձ, և ավելի յիռանդով շարունակում եմ աշխատանքս: Սենյակիս իրերը ազդում են ինձ վրա:

Դրանք իմ ստեղծագործությանս անբաժան քնկերներն են, դրանք համագործակցում են ինձ և, պատահած դեպքում, փոխում իրենց տեսքը:

Վաղվոքի չեմ թողնում սենյակս հավաքել:

Հաճախ ամբողջ շաբաթներով փոշու հաստ չեբրտով ծածկվում է սենյակս:

Այդ ինձ չի նեղացնում. ինձ համար ավելի անհաճելի կլինենք, յեթե վորեւե մեկը խոսնգարեր սենյակիս իրերի սիմամետրիան և մոմակալիս զիրքը, վորի չերեւումն լուսին աջակողմից եմ սուվոր, հանկարծ կարող են ձախակողմ դնել, այն ժամանակ վատ կզգամ ինձ:

Վորքան ժամանակ ե. զրուս եյի, ամփոփելով նրա կոնվերետացած դերակատարներին, վորտեղից պետք ե ըղխեր չերևակայածս:

Համարյա նոր եմ վերջացրել ոոմանս և այդ ոոմանի առթիվ ամբողջ յերեք տարի սիրահարված եյի մի աղջկա:

2

Միանգամայն պատահական կերպով հանդիպեցի նրան: Գլուխը քաշ արած գնում եր նա:

Նրա խունացած վերարկուն արևի ճառագայթներից մի տնհայտ գույն եր ստացել: Առաջին անգամ եյի տեսնում, բայց չգիտեմ ինչո՞ւ, կարծում եյի, վոր նա վաղուցվա ծանոթս ե: Ուզում եյի անպայման տես-

նել: Շտապ ճանապարհը կտրելով, կանգնեցի դիմացը.

— Յես ձեզ փնտռում ելի:

Նա հոգնած աչքերով նայեց, ուղեց զարմանալ, բայց չհաջողվեց: Յես ինձ ավելի մոտ զգացի այդ մարդուն:

— Յես ձեզ սպասում եյի այստեղ:

— Ինչո՞ւ:

— Մի՞թե չեք ճանաչում:

— Վո՞չ:

— Իսկ չես՝ շատ լավ:

— Վճրտեղից:

— Ձեմ հիշում, բայց չես գիտելի, վոր դուք այս տեսակ վերաբերու յեք հազնում, այս տեսակ անիմաստ նայվածք կունենայիք. յես գիտեմ, թե դուք այս բոպեյիս ի՛նչ եք մտածում. չես... յես գիտեմ, թե դուք ում եք սիրում:

Աչքերը լայն բաց արեց նա:

Յերեխայի պես ուրախությամբ համակվեց:

— Միքիչ սպասեցեք, թե աստված կըսիրեք, մի հեռացրեք այդ աչքերը, նայեցեք նորից... այո՛, նա յե, ինչ վոր պակա-

սում եր ինձ ձեր մասին, այդ ել գտա. ձեր աչքերը վալրկենապես վառվեցին և հանգան. աչքպես են վառվում վերջին անգամ մահացողի աչքերը. ձեր աչքերը մահացողի աչքերի լին նմանում. ամեն մի փայլատակում քո սրտի մեջ կյանքի նոր թելեր և կտրատում:

Նա ապուշ կտրած նայում եր, կարծես իմ խոսակցութլունը չեր լսում. դառն ժպտաց և զգուշ քայլերով հեռացավ:

— Շնորհակալութլուն, ցտեսութլուն. ինչո՞ւ հատուցեմ փոխարենը. փող փոխ կտամ. ցանկան՞ում ե՞ք, — նրա լետեից կանչեցի լես:

Յերբ սենյակումս գրասեղանիս մոտ նստեցի, հիշեցի այն մարդուն.

— Վճրտեղից եմ ճանաչում:

Հանկարծ հիշեցի. — չե՞ վոր նա պատմըվածքիս հերոսն և:

3

Ընթերցողս, ազատ ես: Յերեակայիր միջակ հասակով մարդ, մարմինը անհամաչափ, յերկար վոտներ, կուրծքը փոս՝ ըն-

կած, կարծես մեկը բռունցքով և օտել, բարակ շարժուն վիզ, վզին կպած մի աշնակուսի մեծ գլուխ, վոր չերբ նայում ես վրան, անմիջապես հարց և ծագում՝ ինչո՞ւ չեր հարկավոր աշտնան մեծ գլուխ աշտակսի փոքրիկ մարմնի համար։ Յես այս ամենին ուզում եմ Պիմեն անունը տալ։ Աշտակսի տպավորություն և թողնում ձեզ վրա Պիմենը, չերբ դրան նայում եք հեռվից, բայց փորձեցեք և առաջից կտրել ճանապարհը. կարելի չե ձեզ վորպես անծանոթի պատվի, մի վալրկյան կանգ առնի։

Դեմքի յերկու կողմերից փոքրիկ բլրակների պես դուրս են ցցված աչտոսկրները։ Պիմենը միշտ գլխարկով և ման գալիս և աչդ և պատճառը, վոր խիտ ու լայն ունքերի տակից նրա աչքերը չեն յերևում։ Ձեզ գաղտագողի կնալի, ինչան դժգոհության, շտապ ձեռքը կքսի քթին և կպտորաւտվի քայլելու. սկսեք խոսիլ.

— Լուսանկարիչ Պիմեն, ասացեք՝ չերբ կարելի չե ձեզ տեսնել։

Նա գլուխը կբարձրացնի, գլխից մինչև վոտքերը կզննի խրանած աչքերով. չեթե

հավանեց, աչքերը կհանգստանան և ձեր աչքերի զիմաց նրա աչքերը յերեխաների պես կանդկաւնեն:

Ձեզ կզարմացնեն այդ աչքերը: Կարծես զրանք տարորինակ կերպով վողորմութլուն են հալցում:

Դուք կզգաք, վոր նրանք աջնալիսի վողորմութլուն են խնդրում, վորի զիմացը դուք անուժ եք: Ձեզ վատ կզգաք և, անկախ ձեզանից, ձեր դեմքը կփոխվի: Այն ժամանակ Պիմենը կխլի ձեր հայացքը, մի իրից մյուս իրի վրա կվազեցնի, ջղաճնութլամբ ձեռքը քթին կքսի և կհեռանա ..

Յեթե մոտիկ անկցունով անցնի, անցնելու ժամանակ կնայի դեպի ձեզ. թեև շատ և ուզում չնայել, սակայն համբերել չի կարող:

Խղճում եք Պիմենին. այն ժամանակ ըզդացնել մի տաք նրան, վոր նրան տեսաք:

Դուք, իհարկե, մնում եք զարմացած: Մոտիկ խանութպանին, վորը ձեր և Պիմենի հանդիպումը տեսնում էր, կասեք.

— Տարորինակ մարդ և:

Յեթե դուք հազնված եք մաքուր և նո-

րին արժանապատվութիւնն նալլածք ունեք, այն ժամանակ խանութպանը կպատասխանի հեգնական ժպիտով.

— Քաղաքում ուրիշ լուսանկարիչ ել կա:

Դուք կհեռանաք նրանից, կզգաք, վոր խանութպանի կոպիտ միտքը ձեր հետաքրքրությունը չի բավարարում:

Ավելի լավ ե նորից սպասեք այս տողերի հեղինակին:

*
* *

Գովառական քաղաքը ինձ հիշեցնում ե վատ ե միազուլն ներկերով մի նկար. արեւածագին միքիչ պայծառության նշույլ կստանա, արեւամտին միայն սև գույն կպատի: Միայն ու միայն....

Ուրիշ վո՛չ մի բան չի փոխում դրա միտապաղաղությունը:

Այստեղ ձանձրալի անձրևներ են ե սրտաճաք տխրություն կա: Մարդ իրանից ել կզզվի:

Կինոյում շաբաթներով գնում ե «Տարղանը» ե «Մացիստի վերջին արկածները». հանդիսատեսները ուժեղ խղճահարության

սարսուռ են զգում, չերբ Տարզանի վրա հարձակվում են հարյուր առյուծ և վագր, խղճում են նրան և չզիտեն, վոր ամերիկյան ֆիլման առևտրական տեսակետից չի թողնի նկարի առաջին գործողության մեջ Տարզանի պարտումը: Տարզանը կազատվի, հանդիսականները ուրախանում են, միայն զարմանք ևն հայտնում, թե մի՞թե հարյուր առյուծ մի մարդ ուտել չեն կարող:

Տները սպիտակ են, պատուհաններից կախված են ձեռագործ վարագույրներ, այդ վարագույրների յետևը աղբում ե ժողովուրդը: Նրանց ուրախացնում ե տոների մոտենալը, գարունը և ծանոթ ընտանիքներում՝ հարսանիքը: Յերեկոներին թեյում են պատշգամբներում, մաքրած ինքնայեռի թշտյի հետ անց են կացնում իրանց զբոսայգիները առորչա կլանքի հարցերի շուրջը: Թեչիլուց հետո կսկսվին բամբասանքներ, կցանկան իրար նորից յերջանիկ հանդիպել և կցրվեն: Յես ուզում եմ, վոր Պիմենը այսպիսի քաղաքում լինի մեծացած:

Յես հիմա մտածում եմ՝ ի՞նչ տեսակ բնավորության տեր աղջկա կսիրեր Պիմենը:

Մի բան պարզ է ինձ համար. կոմմունար աղջիկը նրա մեջ վոչ մի համակերանք առաջ չեր բերի. աղջկա կայտառ հայացքից և ուժեղ կամքի ձայնից նա ավելի կխրտներ (յես ավելի լավ գիտեմ Պիմենի բնավորութլունը):

Արիստոկրատ շրջանի աղջիկը մոտիկ էլ չեր թողնի Պիմենին:

Ուրեմն, ի՞նչ անեմ, ի՞նչ պիտի աղջիկ գլուհեմ նրա համար:

Քսանկութ տարեկան չերիտառարդ և, այսպես թողնել չի կարելի. պատմվածքիս սյուժեն կփոխվի:

Պիմենը առաջ նոտարիուս էր և հիմա այն էլ չգիտե, թե հեղափոխութլունից հետո իր գրասենյակում հաճախորդների թիվը ինչո՞ւ պակասեց: Այդ փոփոխութլան նախեց թախծալի աչքերով, ծախեց գրասենյակի առուղարդը և գնեց լուսանկարչական գործիք:

— Ուռումն:

— Ինչ լավ միտք հղացա:

Պիմենը առաջ նոտարիուս էր, չե՞. նա անշուշտ ընկերական կապ կունենար նոտարիուս ընկերոջ հետ. հաճախ Պիմենը նրա

մոտ թեյելու կփար: Այս հոտաբերուսը աղջիկ կուենենաւ, վորին պանսիոնում սովորելու տփած կլինէր: Պիմենը կսիրահարվեր աղջկա վրա, վորին կարելի չի տալ Անգելինա անունը:



Իմ առաջ հիմա բացվում ե հետեյալ պատկերը:

Անգելինայի անվանակոչությունն է:

Նախընթաց գիշերը Պիմենը հանդիստ չեր կարող քնել, կիտրհեր, կմտածեր, կփորձեր լաւ խոսքեր պատրաստել, վորով ավելի դուր գար Անգելինային: Հանդիպման ժամանակ ձեռքը կհամբուրի և կասի.

— Անգելինա Տիմոֆեյենա, բոժե մոյ, այսօր դուք հրեշտակի յեք նմանում, — աչքերն անհայտ, անվերադարձ կկորցնի սենյակում և...

Բայց վոչ, դեռ ինչո՞ւ յիմ շտապում:

Ուրեմն այսպես, անվանակոչության գիշերը Պիմենը անհանգիստ կլուսացնի, հետեյալ ուրը գլխացաւ և փորացաւ կզգա: Տարացրած աղյուսների վրա կնստի, ցավը

կանցնի, թե՛ կիւմի, գրասենյակ կգնա, սպասումի մեջ՝ որը տարտամ կանցնի, ժամանակից վաղ դասենյակը կփախի և քաղցած շան պէս կսկսի վիտրինաներին նայել:

Շատ կմտածի, ավելի շատ, քան չես իմ սիրած աղջկա վրա, վերջը կառնի զեղին ժապավեն, շոկոլադ և նախշած ալրոմ, վորի կաղմի վրա նկարված մերկ ամուրը նետով խոցում է իր սիրտը: Վիզլիտեան կհագնի (յերկու տարի յեր հավաքում փողերը դրա համար և միայն այսպիսի դեպքերումն էր հագնում), կշինի ոսլայած բիւակները և կառքով կուղևորվի դեպի Անգելինայի տունը:

4

Ի՞նչպիսի աղջիկ պետք է լինի Անգելինան:

Պանսիոնում լավ ռեվերանսներ կսովորեր, կսիրեր պանսիոնի սովերաշատ պարտիզում սանտիմենտալորեն ցնռել լուսնի վրա, կունենար ռոմանտիկ աչքեր և կունենար մարտ ամսվա անձրևների պէս ձանձրացուցիչ հառաչանքներով ի խոսակցութուն: Կլիներ թույլ... Վոչ, բոլորովին թույլ չպիտի լիներ, թե չէ հետո կոմմունարը չեր

սիրի: Այսպիսի կազմվածք կունենար, չեթև
ամառն ամառանոց չգնար, այնուամենայնիվ
փնաս չեր լինի: Կկարդար Չարսկաչայի ու-
մանները, կճարեր ծածուկ «Մարգարիտա
Գոտչե» և կիմանար աչն կչանքը, վոր
սլտտվում եր սլանսիոնի սպիտակ սլատերի
մեջ:

Հրաշալի չե:

Ուրեմն սա կլինի աղջկա տիպ, վոր կչան-
քի մեջ չեղած փոփոխություններին և
չերևույթներին չի կարող համապատասխան
դիմադրական ուժ ցուցահանել: Վորպեսզի
ընթերցողիս մեջ կասկածներ առաջ չդան,
այդ իսկ պատճառով հեղափոխությունը
վրա կհասնի Անդելինայի սլանսիոնի վեր-
ջին դասարանում չեղած ժամանակ:

Պանսիոնը կփակվի: Անդելինան անմի-
ջապես դուրս կգա սլանսիոնի սլատերից և
կմտնի կչանքի ժխորը:

5

Հաճախ աշխատելու ժամանակ ինձ մոտ
գալիս են ընկերներս:

Այս հյուրընկալությունը դուրսիկան չե
ինձ համար, այդ իսկ պատճառով պատու-

հանիս ապակու վրա կալցնում եմ հետեյալ հայտարարությունը. —

ՏԱՆԸ ՁԵՄ

Հենց այժմս ել լսում եմ պատուհանի թխկթխկոցը:

Գրեւուց հոգնեցի, կարելի չի հուր ընդունել. ներս ե մտնում իմ ընկերը, չերիտասարդ քննադատ: Յես նրան պատմում եմ մինչև հիմա նախագծած պատմվածքիս մասին, և սկսվում և հետեյալ խոսակցությունը մեր մեջ.

ՅԵՍ. — Հասկացա՞ր, այժմ յես ուղում եմ Պիմենին հասցնել ինքնասպանության:

ՆԱ. — Ձեմ հասկանում: Պիմենին լինչը պիտի հասցնի այդ վերջավորությանը: Նա խղճալի և կամքի ուժը կ'ըրբած անձնավորություն և: Ինքը չի համարձակվի ինքնասպանություն գործել:

ՅԵՍ. — Ի՞նչպես, միթե ինքնասպանություն միայն ուժեղ կամքի տեր մարդիկ կարող են գործել:

Նա գլխի շարժումով համաձայնվեց:

ՅԵՍ. — Յես քեզ հետ համաձայն չեմ. այդ մասին չվիճենք: Խոսենք միայն իմ հերոսի շուրջը:

ՆԱ. — Պիմենը հասարակական կյանքից մի-
անգամայն կտրված ե, չէ:

ՅԵՍ. — Այո:

ՆԱ. — Ի՞նչն ե հետաքրքրում նրան:

ՅԵՍ. — Առաջին՝ փող. յերկրորդ՝ փող. և
չերրորդ՝ դարձյալ փող:


ՆԱ. — Ձեմ հասկանում:

ՅԵՍ. — Նա գիտե, յեթե փող չունենա, այլ
կերպ Անգելինային չի կարող առնել:

ՆԱ. — Ի՞նչպես: Անգելինան սիրում ե նրան:

ՅԵՍ. — Հիմա չգիտեմ: Մինչև այժմ Անգելի-
նան վորոշ հարգանք եր տածում դեպի
Պիմենը. այս հասարակ պատճառով ել
կարելի չե բացատրել, վոր Անգելինան
իր շուրջը ուրիշ տղամարդ չի տեսնում:
Պանսիոնից հասունացած աղջիկ դուրս
չեկալ. նրա մեջ արյունը յեռում ե և
սրտում քաղցր զգացմունքները խաչ-
տում: Այս զգացմունքները պանսիոնի
պարփակող պատերից հետո ավելի վառ-
վեցին և նրա մեջ ուժեղ թափով կիրք
առաջ բերին դեպի տղամարդը:

Պիմենն ել այստեղ եր, պանսիոնի
պատերի նման միատեսակ սիրալիր



խոսքերով, և բնական ե՛ւ աղջկա մեջ կա-
ռաջանային համաձայնութեան նշաններ:
Նրանց մոտիկութեանը նպաստում եր
Անգելինայի հայրը. Պիմենի մեջ նա
պատվովոր փեսա և ծերութեան հասա-
կում իր հոտարիուսական գործերի փո-
խարինող եր տեսնում: Մի խոսքով՝
Պիմենի յերջանկութեան չերկնքի վրա
վոչ մի ամպի նշույլ չեր յերևում: Սա-
կայն հեղափոխութեանը...

ՆԱ. — Ի՞նչպիս:

ՅԵՍ. — Անգելինայի հոր ընտանիքը քայքայ-
վեց: Հայրը սրտի պայթումից վախճան-
վեց: Ընտանիքի յեկամուտը պակասեց:
Սկսեցին տան իրերը ծախել: Միքանի
ամսից հետո այդ ելվերջացավ, և անա-
ռելի չքավորութեան մեջ ընկան:

ՆԱ. — Միթե Անգելինան չեր կարող մի վորհե
տեղ ծառայել:

ՅԵՍ. — Բանը գրանումն ե, վոր չե: Սկզբնա-
կան շրջանում մայրը և վորդին կարծես
ինչ-վոր բանի ելին ապաստում. կարծես
ինչ-վոր մեկը պիտի դար և նրանց
տոպրակներով լի փող բերեր: Աղջիկ և

ծառայութիւնն. ո՞վ եւ լսել, — աղջիկը կը-
պոռնկանա, — շատ անգամ լսել եմ Ան-
գելինայի մորից. բացի այդ, Անգելինան
անգործունչա եւ վախկոտներից մեկն էր:
Պաշտոն խնդրելու համար վոչ մի տեղ
չէր համարձակվի գնալ:

ՆԱ. — Ի՞նչ էր անում Պիմենը, միթէ չէր
ոգնում նրանց:

ՅԵՍ. — Վորպէս փեսա չհավանեցին, եւ Ան-
գելինայի մայրը մերժեց:

ՆԱ. — Ձե՞ վոր դու ասացիր՝ Անգելինայի հոր
ցանկութիւնն էր Պիմենին աղջիկ տալ:

ՅԵՍ. — Այդ առաջ էր: Աղքատութիւնից
հետո Անգելինայի մայրն ընտանիքի
վերականգնման միակ միջոց Անգելի-
նայի ամուսնութիւնն էր համարում:
Մտածում էր՝ վորեւե հարուստի կտամ,
չէս ել նրանց կսպասավորեմ եւ այսպէս
չերջանկության մեջ կանցկացնեմ իմ
ծերության վերջին որերը: Յե՛վ դգում
էր, վոր լուսանկարիչը չէր կարող իր
ծերության վերջին որերին քաղցրու-
թյուն տալ:

ՆԱ. — Խեղճ Պիմեն...

ՅԵՍ. — Մեր ժողովը խոր խոցեր կթողներ Պիսենի վրա. անքուն գիշերներ կլուսացներ, ջրերի վրա կազդեր և մոլորված կսկսեր անդործ թափառել: Անդործության կմատնվեր: Հաճախ չերազում Անգելինային կտեսներ, ուրախությունից խեղճը կզարթներ... Ջեռքին պատուված վերմակը կմնար, անասելի թախիժը կըճմլեր սիրտը, վեր կկենար, կհագնվեր և արտասվալի աչքերով կսկսեր նայել այն աղջկա տան պատուհանին, վորին նրան չարժանացրին: Լուսադեմին կվերադառնար տուն, տունն աչքերին գերեզման կերևար: Կվերցներ օղալարատը և կուղևորվեր դեպի այդի: Աշխատանքի ժամանակ Անգելինային կմտաբերեր, կտարվեր մտածմունքներով և նկարչական պատվերները կփչացներ: Շատերին շատ ներկ կքսեր, շատերին ել քիչ...

Այս հանգամանքը վատ լուսանկարչի համրավ կտարածի քաղաքում նրա մասին, և պատվիրողները կնվազեն:

Պիմենն որ ու գիշեր հավասարեցնում է. գիշերները վոտանավորներ է գրում

ննջեցյալների վրա, յերբ լուսանկարվելու չեն գալիս ննջեցյալների ազգականները, Պիմենն ալդ վոտանավորները ննջեցյալների նկարների տակ և զրուս և այսպես, շատ անգամ, վառ եքստազի չիր բերում պատվիրողներին:

Իր վրա շատ քիչ ուշադրութլուն և դարձնում, քիչ և ուտում, վոչ մի ժամանցի վայր չի գնում, կոպեկ-կոպեկի վրա չե գնում և այսպես փող հավաքում:

Յես կարծում եմ, վոր նա միաջն աչն հուսով և ապրում, վոր վերջիվերջո Անգելինան իրը պիտի գառնա. քնած ժամանակ գառանցանքի մեջ միշտ նրա անունն և տալիս, հազար ու մի սիրալին խոսք և ասում: Մի անգամ, չգիտեմ վորտեղից, ճարեց նրա լուսանկարը: Յերբ որն անձրեային և լինում, աշխատանքի չի գնում, տանը նստած տանչակ որինակներով Անգելինայի նկարներն և մեծացնում և հարեան կոշկակարի ձեռքով ուղարկում Անգելինային: Տղին, պատճառած նեղության համար, լուսանկարիկ և խոստանում:

ՆԱ. — Հրաշալի լի: Առաջժամ լավ ե ընթա-
նում քո պատմվածքը, հետո տեսնենք:

ՅԵՍ. — Հետո լիս ել չգիտեմ՝ ինչ ե լինելու:
Դու պիտի ոգնես:

Նա ժպտաց և մտածմունքի մեջ ընկավ:

ՆԱ. — Դու ուզում ես, վոր անպայման
պատմվածքը Պիմենի ինքնասպանու-
թյամբ վերջանա:

ՅԵՍ. — Այո: Նա այնպիսի տիպ ե, վոր իմ
մեջ բուրբուլին համակրանք չի դնում:

ՆԱ. — Ձե՛ր լինի, վոր այսպես պատահի. --
Անգելինան ուրիշի վրա ամուսնանա,
Պիմենը վրեժխնդիր լինի, կամ Անգելի-
նային և կամ Անգելինայի ամուսնուն
սպանի:

ՅԵՍ. — Պիմենը ուրիշին սպանի: Նա չղջի-
կին ել խեղդել չի կարող, և կատաղած
շանը գնդակ արձակի:

ՆԱ. — Յեթե Անգելինային նա շատ ե սիրում
և առանց դրան ապրել չի կարող, ալդ
դեպքում...

ՅԵՍ. — Մինչ վրեժխնդրությունը ինքն ի-
րեն սրտաճաք կլինի և կմեռնի:
Խորհեցի՛նք:

ՅԵՍ.— Փողոցում ինձ հանդիպում ե Պիմե-
նի նման մարդ. հարցնում եմ նրան՝ ինչ
կանելիք, չեթե Պիմենի տեղը լինելիք:

ՆԱ.— Ել ինչ գրող ես, չեթե այդ հարցի
պատասխանը չես գտնում. .

— Հրաշալի միտք հղացա:

ՅԵՍ.— Ասա:

ՆԱ.— Կարելի՞ չե, թե չե, Անդելինան վոր
չամուսնանա... Հեղափոխությունից հե-
տոջատ ժամանակ ե անցնում. նա ջահել
ե, հեշտությամբ կշնչի նոր կյանքի հովը,
կծանոթանա նորի հետ, կհասկանա, վոր
բացիտան իրեր ծախելուց և ամուսնա-
նալու մտքից, ուրիշ կյանքով ել կարող
ե ապրել:

ՅԵՍ.— Պոռնկությամբ...

ՆԱ.— Վնչ. Հեղափոխությունից հետո ինչ-
քան գործարաններ շինվեցին. չենթա-
դրենք Անդելինալի տան կողքին մանվա-
ծալին գործարան բացվեց, Անդելինան
պատուհանից նայում ե այնտեղ ո շխատող
ընկերներին. Կարծում եմ, այն ժամանակ
Անդելինան կհաղթահարի իր ամոթխա-
ծությունը և կմտնի այնտեղ աշխատելու:

ՅԵՍ. Յեղբայր, դու բոլորովին փչացրիր
գործս: Այն ժամանակ Անգելինան կա-
մուսնանա Պրմենի հետ. չե՞ վոր Անգելի-
նայի մայրը չի տալիս աղջիկը՝ աղքատու-
թյան պատճառով:

ՆԱ. — Մի՞ ընդհատել տուր: Անգելինան
առողջ և զեղեցիկ աղջիկ է, չե՞:

ՅԵՍ. — Այո:

ՆԱ. — Իսկ Պրմենը թույլ և շատ ան-
շնորհք մարդ է, չե՞:

ՅԵՍ. — Ավելին, ինքնամիտի և կասկա-
ծամիտ:

ՆԱ. — Բացի այդ դու ասացիր, վոր Անգե-
լինայի համակրանքը դեպի Պրմենը բա-
ցատրվում է նրանով, վորնա նստակցա-
կունք է վարում և ուրիշ վոչ մի ծանոթ
մարդ չունի:

ՅԵՍ. — Հետո դրանից ի՞նչ դուրս կգա:

ՆԱ. — Այ ինչ, Անգելինան գործարանում
կաշխատի, այնտեղ կշանքով լի կաշտան
ու տուռչդ վերիտ ստարդ բանվորներ կլի-
նեն ... Անգելինան կին է, ընտրություն
կանի, և վերջը մեկին կհավանի, գործարա-
նի կյանքին վոր ավելի մոտեցնես Անգե-

լինալին, կարող ես կոմրջիջի ժողովներին
 ել թողնես: Ժողովներից մեկում ամուսնու-
 թյան մասին հարց դիր: Անդելինան կհե-
 տաքորբով: Ժողովին ներկա կլինի, առա-
 ջին անգամ կամ ս:ի, իրեն վատ կզգա և
 չերբ կտեսնի, վոր իրա պես ջահել աղջիկը
 զեկուցում ե և ազատ վիճաբանում այն
 հարցերի շուրջը, վորոնց մասին իր պան-
 սիոնում էամ տանը մտածելուց վախչում
 եր՝ կընտելանա և կակտիվանա:

ՅԵՍ. — Հրաշալի միտք ե:

ՆԱ. — Նկարագրի բզործարանի կյանքը, ցույց
 տուր ընկերական փոխհարաբերությու-
 նը, զգացնել տուր, վոր ամուսնությունը
 չերկու հակառակ սեռի ազատ կենակցու-
 թյուն ե, կանանց իրավունքը պաշտպան-
 ված ե, և տղամարդկանցից բաժանվելու
 դեպքում փողոցում չեն մնա:

ՅԵՍ. — Խորհուրդ եմ տալիս թողնես քըն-
 նադատությունը և դառնաս զրոգ:

ՆԱ. — Դուք վոր կաք, ի՞նչ եք շինում: Ան-
 հատապես քեզ չե. բայց ուրիշները...
 մեկ-յերկու բանաստեղծություն կգրեն և...

ՅԵՍ. — Բանաստեղծություն Պիմինն ել

եր գրում, դա մեծ բան էի. հարցն այն է, թե ինչ են գրում և վորքանով համապատասխանում է մեր կյանքին:

ՆԱ.— Լսիր, վոր Պիմենի սիրո տրագիկան ձգձգես և ցույց տաս նրան իր վոչընչությունը, այն բանվորին, վորին Անգելինան կսիրի, Անգելինային և Պիմենին մի վորևե տեղ հանդիպեցրու, հետո հաջողեցրու բանվորի վարմունքով Անգելինայի մեջ ատելություն առաջացրու Պիմենի հանդեպ:

Լռեցինք:

— Ծխախոտ չե՞ս ուղում:

— Տո՛ւր: Ժամանակն անցավ:

Բաժանվեցինք:

6

Զմայլված եմ, պատմվածքի սյուժեն համարյա պատրաստ ունեմ, գրողի ամենասիրելի վայրկյանները ստեղծագործության վայրկյաններն են, չերբ մտածում ես նյութի վրա և զգում, վոր կգրես այդ: Այդ ժամանակ ուրախանում ես և ինչ-վոր անսովոր ուժ ես զգում. գրելուց հետո գուքեզ համար այլևս չկաս:

Զայրացած ման եմ գալիս, չեմ կարող մտաբերել՝ վճռտեղ կարող են հանդիպել իրար: Պիմենը գործարան չի գնում, իսկ թատրոն՝ ատելով ատում ե:

Զգիտեմ. ինչ անեմ: Զգում եմ, թե ինչպե՛ս Պիմենը կառի իր հակառակորդին: Այս ատելութւան նկարագրությունը կարելի չե տալ այսպես. — Անգելինայի տան դիմաց այգի յե, այգում Պիմենի լուսանկարելու գործիքն ե դրած:

Շաբաթ յերեկոյան, յերբ աշխատանքից շուտ կվերադառնա Շալվան (յերիտասարդ բանվորի անունն ե), Անգելինային կուղեկցի: Անգելինան կասի.

— Շալվա, նկարդ տուր, ուզում եմ ուղարկել գլուզը, մայրիկիս:

Շալվան կխոստանա: Պիմենը կլսի այս խոսակցությունը:

Կիրակի առավոտյան Շալվան իր ընկերներով ներս կմտնի այգին և կուղևորվի դեպի Պիմենը: Շալվան չգիտի Պիմենի համակրական զգացմունքները դեպի Անգելինան: Մինչ Պիմենը գործիքը կհարմարեցնի, նրանք կանգնած կխոսեն իրար հետ:

— Ուրեմն, քո հարսանիքում լավ կխըմենք, ասնպես չե՞, Շալվա:

Շալվան կժպտա: Պիմենը կլսի այս խոսքերը, ձեռները կսկսեն դողալ, արցունքներով կլցվի, իրեն կկորցնի, կզգա, կարծես թե սիրտը պոկեցին, չիրկար տարիների ցնորքներն ու հուլսերն անհետացան, պատրաստ է մոտենալ Շալվային և ասել:

— Պարոն, ձեր դեմքին ժպիտ կա, դուք ուրախանում եք կյանքով, շրջապատված եք ընկերներով, սիրուն եք, ուրիշ սիրուն կանայք ել կսիրեն ձեզ, իսկ չե՞ս, տեսնում եք, կմախք դարձա, որ ու զիշեր աշխատելով հավիցի, ինձ ուշադրություն չեցի դարձնում, քիչ եյի ուտում, փող եյի հավաքում և ուզում եյի Անգելինայի հետ ամուսնանալ: Յես սիրում եմ նրան, չես չեմ կարող առանց նրան ապրել, վերավոր դադանի պես ճմլվում ե սիրտս, սվկիանոսում կորած փոքրիկ կզոռ պես մենակ եմ: Պարոն, զիջեք այդ աղջիկը:

Պիմենը պատրաստ է Շալվայի վոտքերը փաթաթվելու, բայց խոսքը բկին կկանգնի, քայլերը կանգ կառնեն, սրտածմլիկ

թախծությամբ կնայի Շալվային: Կսկսի
դողալ:

— Նկարսում ես, թե չե, — կկանչի Շալ-
վան:

Պիմենը կշփոթվի:

— Այո... Ինչպե՞ս չե, այս բոսիկիս:

Շալվան մտպերն ե ուղղում, սանրվում:
Կալծակի արագությամբ բոլորն անցնում ե
Պիմենի մտքով. նա այս նկարը Անդելի-
նային կտանի. ինչպե՞ս ուղղում ե գեղեցիկ
դուրս դա ե հավանի:

Աստվա՛ծ իմ, աստվա՛ծ իմ... Բալց
վո՛չ, Պիմենը վատ կնկարի, ալլանդակ դուրս
կբերի, կամ թե չե բոլորովին չի նկարի:
Յերեկոյան կտեսնի Անդելինային ե նորից
կխնդրի, կաղաչի, վերջին անգամ կփորձի:

Շալվայի համբերությունը հատնում ե.

-- Ընկեր, այսօր կարժանացնե՞ս, թե չե:

Պիմենն աչքերը չոելով կմրթմրթա.

— Այսօր... այսօր քամի յե: Նկարը
վատ դուրս կգա:

Շալվան կծիծաղի:

— Քամի՞: Ծառի տերեւներն ել չեն
շարժվում, հիմար:

Պիմենն ավելի կշփոթվի:

— Յես... չես հիվանդ եմ, այսօր աշխատել չեմ կարող, ներկեր ել չունեմ: Յես... խղճացեք... պարոն... հետո...

7

Այս մտածմունքի ժամանակ ուշադրությունս հանկարծ գրավեց որկեստրի ձայնը. նայեցի, կոմյերիտականները մարմնամարդացին շորերով, շարքերով քայլում ելին:

Նրանց տեսնելը դուրս բերեց ինձ անհարմար դրությունից:

Այ, ինչպես կարելի չի յերեք հերոսներին հանդիպեցնել իրար:

Յերեկոյան այգում ֆիզկուլտուրային լամբակը կպարապի. Շալվան, իհարկե, կմտնակցի, խաղին ներկա կլինի և Անգելինան: Պիմենը վորոշել է այդ յերեկոյան Անգելինային հանդիպել: Տանը չի գտնի, կիմանա վոր այգումն է, կգտնի և փոփոսալով կասի.

— Անգելինա, չես... չես ձեզ հետ գործ ունեմ: Անգելինան կպատասխանի.

— Դեռ ժամանակ չունեմ, ան, նրանց պետք է նայեմ,— ձեռքը մեկնելով մարզան.

քի զործիքների մոտ կանգնած կարճ շալ-
վարները հագած, հերթով կանգնած խաղա-
ցող չերիտասարդներին:

Պիմենը ինչ-վոր կմտածի:

— Ինչպես փոխվեց Անգելինան, կիսա-
մերկ աղամարդկանց հայելով՝ հրապուր-
վում ե:

Խաղը կսկսվի: Պիմենը դարձյալ կկրկնի
իր աղերսանքը: Անգելինան պատասխանի
փոխարեն ծափ կղարկի, ձեռքով կբռնի
Պիմենին և առաջ կքաշի:

— Տես, տես, ինչ լավ կազմվածքով ե,
ինչ ուժով, ինչպես են խաղում մկանները
արևի ճառագայթների առաջ, նրա մարմի-
նը նման ե բրոնզից ձուլված կամ թափ-
ված արձանի:

— Պիմեն, դուք նրան չե՞ք ճանաչում,
առաջ յեկե՞ք, ի՞նչ պատահեց: Բոլորին հաղ-
թում ե, կեցցե՛, կեցցե՛ Շալվա...— վոդեոռ-
ված շուռ կգա Անգելինան և դեպի Պիմենը
կհայի:

Կռացած կանգնած ե Պիմենը, ներքին
ծնուտը դողացնելով անմիտ հայում ե հե-
տուն:

Անգիլիոնան հանկարծ աչքը կհեռացնի Պիմենից և ադահարար կնայի Շալվային, հետո նորից Պիմենին կնայի և ծաղրելով կասի.

— Դու նրա չափ ուժ ունե՞ս, կարճիկ ես այնքան ծանրություններ բարձրացնել. ցույց տուր քո մկանները: Նա դործարանում ահռելի անիմներ և պտտեցնում, իսկ դու... կուչ յեկած ճուտ ես, լսո՞ւմ ես, հեռացիր, ատում եմ քեզ:

— Ի՞նչ եմ արել քեզ, ի՞նչ ես ուղում ինձանից:

Պիմենը, ինքն իր մեջ խեղդվելով, դառն կհռաչի, կտեսնի — Անգիլիոնան ուրախությունից փաթաթվում և Շալվային, Պիմենի քայլերը կդավաճանեն. . Նրա աչքերը կվթնեն և հարբածի պես ճանապարհ կընկնի:

8

Այս բնական կլինի, չէ՞:

Իհարկե, Շալվայի ընդունակությունը, նրա ընկերական և ուրախ սիրտը Անգիլիոնային իր ազդեցության տակ կզցի: Գոր-

ծարանում ըստ որն ել սիրում են Շարվալին: Բոլորը վազեցրված են նրա սարքած անիվով: Այդում պատահած դեպքը ամբողջովին կզերի Անգելինային և ցույց կտա Պրմենի վոչնչութունը:

Յես հավատացած եմ, վոր Անգելինան ֆիզիկական ատելութուն կզգա դեպի Պրմենը. միայն այն միտքը, վոր պառկելու յն ուժասպառ ինքնամիտի և կյանքից կտրված մարդու կողքին — նրան անտանելի թախիծով և զզվանքով կհամակի:

9

Արդեն չերեակալած ունեմ այսպիսի վախճան: Յերկար թափառումից հետո Պրմենը գնում և տուն: Ամեն ինչ կատի, վոչ մի բան նրան չի ուրախացնի. ընկեր չունի, ում մասնակից անի իր սրտի ցավին:

Կբացի սենյակի դուռը, ներս կմտնի, կնստի անկողնի վրա և կքարանա:

Հանկարծ վտաքի կկանգնի, մոմը կվառի և կկանգնի հայելու առաջ, շալվարը կհանի զգուշաբար, գոգի պես կզննի սե-
կուսանկարիչը.—2:

նյաւիր, կարծես վախենում ե, վոր մարդ տեսնի, ձեռքի դողոցով վարտիքը կբարձրացնի մինչև մեջքը և կսկսի նայել հալելու մեջ:

Ոձից խայթվածի պես սարսուռ կզգա, հայելու մեջ իր բարակ և վոսկրացած ազդրերը կերևան, սևացած կաշին ստվերախիտ մազերով ե ծածկված, խանձվածի չե նմանում:

Դառն կծիծաղի, կվոլորվի և կվախենա հայելուց դուրս յեկած սատանայից:

Արջունը ուղեղին կխփի, կբղավի և գայրացած, ուժեղ կերպով կզարնի հայելուն:

10

— Ի՞նչ արիր, վերջացրի՞ր պատմվածքի սյուժեն—, հարցրեց ըսկերս:

— Վերջացրի, սակայն վոչ Պիմենի ինքնասպանությամբ:

— Ի՞նչո՞ւ:

— Յեթե հիշում ես, ասել եմ, վոր Պիմենի նման մարդ եմ ճանաչում:

— Ի՛նչպէս չե, մինչև անգամ ինչ-վոր
բան ելիր ուղում հարցնել նրանից:

— Այո, այսօր պատահամբ հետեյալ
տեսարանին ներկա չեղա. նա դնում էր սո-
վորական քայլերով, հանկարծ կանգ առավ,
ձեռները թափ տվեց, շուռ յեկավ և գե-
տին փռվեց: Բերնից արջուն հոսեց, և հոգին
ավանդեց:



THE
LIBRARY
OF THE
MUSEUM OF
COMPARATIVE ZOOLOGY
AND
ANATOMY
HARVARD UNIVERSITY
CAMBRIDGE, MASS.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045012

7 487.

(124)

A $\frac{7}{8194}$

